## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Բագուայ «Մարդասիրական ընկերութեան» ընդհանուր ժողովը ներկայ 1894 թ. համար նշանակել է 1000 րուբլի նպաստ այն անձանց, որոնք կկամենան մի տարուայ ընթացքում վերջնական քննութիւն տալ պետական ուսումնարաններից մէկում՝ ուսուցչութեան իրաւունք ձեռք բերելու համար։ Ցանկացողները թող դիմեն խորհրդին՝ յայտնելով իրանց կամքը թէ երբ և որտեղ կկամենան պատրաստուել ու քննութիւն տալ։ Խնդրատուների մէջ խորհուրդը գերադասելու է նրանց, որոնք աւարտած են թեմական դպրանոցը կամ Գէորգեան ճեմարանը։

Նախագահ խորհրդի Գ. ԹՈՒՄԱՆԵԱՆ.

Ատենադպիր Ա. ԳԱԼՍՏԵԱՆ.

## Յայտարարութիւն.

Արդէն վաղուց ի վեր ժողովել և ժողովում եմ Հայոց ազգային ժողովրդական երգեր և պարեր, նաև եկեղեցական հոգևոր երգեր, տաղեր և մեղեդիներ (Ս. Էջմիածնի հին եղանակով)։ Խնդրում եմ մեր ուսուցիչներին և բանասէրներին, որ ինձ օգնեն այս գործում։ Իւրաքանչիւր գաւառի մէջ յայտնի երգիչների երգածները, մեծ զգուշութեամբ եղանակներն առանց ՓՈՓՈԽԵԼՈՒ՝ ՆՈՅՆՈՒԹԵԱՄԲ ձայնագրել Հայ կամ Եւրոպական նոտաներով և ուղարկել ինձ։ Ամեն 10 հատ ժողովրդական երգ ուղարկողը, ձրիաբար կստանայ մի օրինակ «ՔՆԱՐ ԱԶԳԱՅԻՆ» երգարանից, որ պիտի հրատարակուի շուտով Հայոց և Եւրոպական նոտաներով՝—առանձին առանձին։ Դիմել ինձ հետևեալ հասցէով։ Москва, Мясницкая, домъ Ермаковыхъ М. Бархударову. Передать свящ. Газаросу Овсепьянцу. 1—3

Եկեղեցական ամենատեսակ զգեստներ ընտիր ասեղնագործ և հասարակ՝ բուն Հայկական ճաշակով. Սաղաւարտներ, Վակասներ, Գօտիներ, Շուրջառներ, Փորուրարներ, Եպիսկոպոսական Թագեր, Եմիփորոններ, Արտախուրակներ, Գաւազանի և Սկիհի քողեր, Սարկաւագի ուրարներ, Ս. Սեղանի սփռոցներ, Հողաթափեր, Ամպհովանիներ, Խաչվառներ, Նշխարքի տիպեր, և այլն և այլն։ Առաջարկում է պատրաստի և համաձայն պատուէրի պատրաստելու թէ նորերն և թէ հնոտիները նորոգելու ամենադիւրամատչելի գներով. բազմամեայ փորձառու, և պարգևատրուած գծագրական թերթով Կովկասեան ցուցահանդէսից Տփխիսու։ Պատուէր տուող ցանկացողներին խնդրում ենք դիմել այս հասցէով։ Въ Тифлисъ, Банковскій переулокъ, домъ Генерала Денаякина № 12 Священнику Симеону Абраамянцу

БИБЛИОТЕКА